ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

Դատական դեպարտամենտի կարիքների համար սեղան թափքով մեքենաների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-22/02» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«20» հոկտեմբերի 2022թ.
ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Արթուր Ասատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/գնահատման հանձնաժողովի ղեկավար՝ **ԳՊ/ԳԱՊ**)

հանձնաժողովի անդամներ՝

Տիգրան Զեյնալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/գնահատման աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**)

Վարդան Կարապետյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ – շինարար (գնման պատասխանատու/գնահատման աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**)

Արմինե Մարգարյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ – տնտեսագետ (գնման պատասխանատու/բացման աշխատակազմ՝ **ԳՊ/ԲԱ**)

Կարինե Ղազարյան՝ Դատական դեպարտամենտի կենտրոնական մարմնում սպասարկող՝ տեխնիկական աշխատանքների (գնման պատասխանատու/բացման աշխատակազմ՝ **ԳՊ/ԲԱ**)

հանձնաժողովի քարտուղար՝

Արուս Խաչատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ (գնման պատասխանատու/ընթացակարգի համակարգող՝ **ԳՊ/ՄԻՄ**)

1. Տեղեկատվություն՝ գնման հայտով սահմանված՝ գնվելիք ապրանքի գնի վերաբերյալ.

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնվելիք ապրանքի գնման հայտով սահմանված գնման գինը.

Չափաբաժնի համարը	**Չափաբաժնի անվանումը**	**Գնման հայտով սահմանված գնման գինը /ՀՀ դրամ/**
1	Սեղան թափքով մեքենաներ	30 000 000

2. Տեղեկատվություն՝ Կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետով նախատեսված հիմնավորումների վերաբերյալ.

Հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրի՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

3. Տեղեկություն՝ «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-22/02» ծածկագրով ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին.

www.armeps.am կայքի էլեկտրոնային գնումների իրականացումն ապահովող համակարգում 2022թ.-ի հոկտեմբերի 20-ի ժամը 10:00-ի դրությամբ ոչ մի հայտ չի ներկայացվել:

Հանձնաժողովը որոշեց.

- հաշվի առնելով այն հանգամանքը, որ ընթացակարգի շրջանակում ոչ մի հայտ չի ներկայացվել՝ ընթացակարգը հայտարարել չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն,
- հաստատել «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-22/02» ծածկագրով ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը (կցվում է):

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Արթուր Ասատրյան

Անդամներ՝ _____ Տիգրան Զեյնալյան

_____ Վարդան Կարապետյան

_____ Արմինե Մարգարյան

_____ Կարինե Ղազարյան

Քարտուղար՝ _____ Արուս Խաչատրյան